

Ընթացակարգ Ինքնագնահատման գործընթացի

Նպատակը

1. Գնահատել համալսարանի կրթության սահմանված որակի ստանդարտների ձեռքբերման և որակի շարունակական բարձացման, ինչպես նաև համալսարանի սահմանված նպատակին և ակնկալվող ելքային արդյունքների համար- ժեքությունն ապահովող գործընթացները
2. Գնահատել համալսարանի ստորաբաժանումների գործընթացների համապատասխանության աստիճանը համալսարանի ընդհանուր քաղաքականությանը, ռազմա- վարությանը, ընթացակարգերին և կանոնակարգերին
3. Աջակցել համալսարանի գործունեության արտաքին գնահատ- ման նախապատրաստմանը
4. Իրականացնելով համալսարանի գործունեության SWOT վերլուծությունը՝ նպաստել համալսարանի ինքնագար- գացման և կատարելագործման գործընթացների խթան- մանը:

Փուլերը

1. Համալսարանի գործունեության ինքնավերլուծություն
2. Ներքին աուդիտների կողմից իրականացվող ստուգայցեր և հարցումներ
3. Ինքնագնահատման հաշվետվություն

Քայլերը

1. Ինքնագնահատման անցկացում և սկզբնաժամկետների վերաբերյալ ներբուհական որոշումների կայացում
2. Ներքին գնահատողների կազմի (աուդիտորների) հաստատում
3. Ստորաբաժանումների հետ վերլուծության ենթակա հարցերի պարզաբանում և ճշգրտում
4. Ինքնավերլուծության թղթապանակի պարունակության և գնահատման ցուցանիշների ցանկի ճշգրտում
5. Ինքնավերլուծության իրականացման պլան- ժամանա- կացույցի մշակում և հաստատում
6. Ինքնավերլուծության թղթապանակի կազմում և հանձնում համալսարանի որակի գնահատման և ապահովման կեն- տրոնին
7. Թղթապանակի ուսումնասիրում ներքին աուդիտների կող- մից
8. Ներքին աուդիտների ստուգայցերի կազմակերպում համալ- սարանի ստորաբաժանումներում
9. Ինքնագնահատման հաշվետվության նախնական տարրե- րի կազմում
10. Նախնական հաշվետվության ներկայացում համալսարանի ներքին և արտաքին շահակիցներին

11. Ինքնագնահատման հաշվետվության վերջնական ձևավորում և ներկայացում